ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՅԳԵՇԱՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКАЯ ОБЛ.
МУНИЦИПАЛИТЕТ с. АЙГЕШАТ

Հայաստանի Հանրապետություն
Արմավիրի մարզ, գ. Այգեշատ
հեռ. (0237) 71 – 7 – 51
էլ. հասցե aygeshatarm@mail.ru

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
Армавирская обл. С.Айгешат
Тел. (0237) 71 – 7 - 51
эл. почта aygeshatarm@mail.ru

«17» 10 2017թ. N 99

Արմավիրի մարզպետ

պարոն՝ Ա. Ղահրամանյանին

Հարգարժան պարոն մարզպետ

Կից ներկայացնում ենք Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեշատի (Արմավիր) գյուղական համայնքի ավագանու 2017 թվականի հոկտեմբերի 10 – ին կայացած թիվ 6 նիստի որոշումները:

Առդիր՝ 5 թերթ:

Այգեշատի (Արմավիր) գյուղական համայնքի ղեկավար՝ Ա. Մխիթարյան

Մուտք թիվ 112.6/1913-17
«18» 10 2017թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵՇԱՏԻ (ԱՐՄԱՎԻՐԻ) ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Այգեշատ (Արմավիրի) համայնք, փողոց 3 N 9 շենք

ՈՐՈՇՈՒՄ

«10» հոկտեմբերի 2017 թվականի N 16
ԹԻՎ 6 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6 – րդ մասով.

Ավագանին որոշում է .

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեշատի (Արմավիր) գյուղական համայնքի ավագանու 2017 թվականի հոկտեմբերի 10-ի թիվ 6 նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ (7) Դեմ (0) Ձեռնպահ (0)

Ա. Դիդարյան
Ն. Գրիգորյան
Զ. Ոսկանյան
Հ. Համբարձումյան
Թ. Մխիթարյան
Ռ. Հասոյան
Վ. Հունանյան

Այգեշատ (Արմավիր) գյուղական համայնքի ղեկավար՝ Ա. Մխիթարյան
2017 թվական հոկտեմբերի 10
գ. Այգեշատ (Արմավիրի)

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Այգեշատի գյուղական
համայնքի ավագանու
2017 թվականի հոկտեմբերի «10» ի
թիվ 16 որոշման

ՕՐԱԿԱՐԳ

1. Թիվ 6 նիստի օրակարգը հաստատելու մասին

   Զեկուցող՝ Ա.Մխիթարյան

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեշատի / Արմավիր / գյուղական համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 14-ի N 44-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

   Զեկուցող՝ Ա. Մխիթարյան

3. «Հին էլեկտրոաղաց» կոչվող շինությանը հողհատկացմանը համաձայնություն տալու մասին

   Զեկուցող՝ Ա. Մխիթարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵՇԱՏԻ (ԱՐՄԱՎԻՐ)
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Այգեշատ (Արմավիր) համայնք, փողոց 3 N 9 շենք

ՈՐՈՇՈՒՄ

«10» հոկտեմբերի 2017 թվականի N 17 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵՇԱՏԻ (ԱՐՄԱՎԻՐ) ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14 – Ի N 44–Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18 – րդ հոդվածի առաջին մասի 5 – րդ կետով, «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32 – րդ հոդվածով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56 – րդ հոդվածի երկրորդ մասով,

Ավագանին որոշում է .

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեշատի (Արմավիր) գյուղական համայնքի 2016 թվականի դեկտեմբերի 14 – ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեշատի (Արմավիր) գյուղական համայնքի 2017 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 44 – Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները:

   1) Բյուջեի եկամտային մասում՝ հատված 1 – ում «Հողի հարկ համայնքի վարչական տարածքներում գտնվող հողերի համար» տողում, որտեղ ներառված էր 1256.6 (մեկ միլիոն երկու հարյուր հիսունվեց հազար վեց հարյուր) ՀՀ դրամ, որպես նախորդ տարիների ապառքի գումար, պակասեցնել 1000.0 (մեկ միլիոն) ՀՀ դրամով:
   2) Բյուջեի եկամտային մասում՝ հատված 1 – ում «Օրենքով սահմանված Դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների կամ կատարվող գործողությունների դիմաց ստացվող (գանձվող) այլ վճարներ» տողը պակասեցնել 500.0 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամով:
   3) Բյուջեի եկամտային մասում՝ հատված 1 – ում «Վարչական գանձումներ» տողը պակասեցնել 700.0 (յոթ հարյուր հազար) ՀՀ դրամով:
   4) Բյուջեի ծախսային մասում՝ 01 բաժին 1 խումբ 1 դաս 4234 հոդվածը պակասեցնել 50.0 (հիսուն հազար) ՀՀ դրամով :
   5) Բյուջեի ծախսային մասում՝ 01 բաժին 3 խումբ 3 դաս 4232 հոդվածը

պակասեցնել 40.0 (քառասուն հազար) ՀՀ դրամով :

6) Բյուջեի ծախսային մասում՝ 06 բաժին 3 խումբ 1 դաս 4212 հոդվածը պակասեցնել 2200.0 (երկու միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամով :
7) Բյուջեի ծախսային մասում, որպես նախորդ տարիների ծախս՝ 06 բաժին 3 խումբ 1 դաս 4212 հոդվածը պակասեցնել 610.0 (վեց հարյուր տասը հազար) ՀՀ դրամով :
8) Բյուջեի ծախսային մասում՝ 06 բաժին 4 խումբ 1 դաս 4212 հոդվածը պակասեցնել 600.0 (վեց հարյուր հազար) ՀՀ դրամով :
9) Բյուջեի ծախսային մասում՝ 07 բաժին 6 խումբ 2 դաս 4637 հոդվածը պակասեցնել 160.0 (մեկ հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամով :
10) Բյուջեի ծախսային մասում՝ 10 բաժին 7 խումբ 1 դաս 4819 հոդվածը պակասեցնել 300.0 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամով :
11) Բյուջեի ծախսային մասում՝ 11 բաժին 1 խումբ 2 դաս 4891 հոդվածը պակասեցնել 1750.0 (մեկ միլիոն յոթ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամով :
12) Բյուջեի ծախսային մասում՝ 01 բաժին 1 խումբ 1 դաս 4212 հոդվածը ավելացնել 500.0 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամով :
13) Բյուջեի ծախսային մասում՝ 01 բաժին 1 խումբ 1 դաս 4267 հոդվածը ավելացնել 56.0 (հիսունվեց հազար) ՀՀ դրամով :
14) Բյուջեի ծախսային մասում, որպես նախորդ տարիների ծախս՝ 01 բաժին 1 խումբ 1 դաս 4261 հոդվածը ավելացնել 100.0 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամով :
15) Բյուջեի ծախսային մասում՝ 09 բաժին 1 խումբ 1 դաս 4511 հոդվածը ավելացնել 200.0 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամով :
16) Բյուջեի ծախսային մասում՝ 10 բաժին 7 խումբ 1 դաս 4729 հոդվածը ավելացնել 2654.0 (երկու միլիոն վեց հարյուր հիսունչորս հազար) ՀՀ դրամով :

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10 – րդ օրը :

Կողմ(7) Դեմ (0) Ձեռնպահ (0)

Ա. Դիդարյան
Ն. Գրիգորյան
Զ. Ոսկանյան
Թ.Մխիթարյան
Հ. Համբարձումյան
Ռ. Հասոյան
Վ. Հունանյան

Այգեշատ (Արմավիր) գյուղական համայնքի ղեկավար՝ Ա. Մխիթարյան

2017 թվական հոկտեմբերի 10

գ. Այգեշատ (Արմավիր)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵՇԱՏԻ (ԱՐՄԱՎԻՐ)
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Այգեշատ (Արմավիր) համայնք, փողոց 3 N 9 շենք

ՈՐՈՇՈՒՄ

«10» հոկտեմբերի 2017 թվականի N 18

«ՀԻՆ ԷԼԵԿՏՐՈԱՂԱՑ» ԿՈՉՎՈՂ ՇԻՆՈՒԹՅԱՆԸ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18 – րդ հոդվածի առաջին մասի 21 – րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

Ավագանին որոշում է .

1. Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեշատ (Արմավիր) գյուղական համայնքում 1 փողոց, 1-ին փակուղի, N 8 հասցեում (ծածկագիր 004) գտնվող «հին էլեկտրոաղաց » շինությանը 240 մ/ք գյուղ արտադրական հող հատկացմանը պահպանման և սպասարկման նպատակով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ (7) Դեմ (0) Ձեռնպահ (0)

Ա. Դիդարյան
Ն. Գրիգորյան
Զ. Ոսկանյան
Հ. Համբարձումյան
Թ. Մխիթարյան
Ռ. Հասոյան
Վ. Հունանյան

Այգեշատ (Արմ) գյուղական համայնքի ղեկավար՝ Ա. Մխիթարյան
2017 թվական հոկտենբերի 10
գ. Այգեշատ (Արմավիր)